

ՍԻՄԲՈԼԸ ՀԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

10. Սամուէլեանի

V*)

Հին գերմանացիների մէջ գոյութիւն ունէր իրաւաբանական մի սովորոյթ, տուրևառի կամ հոմանիշ համաձայնութեան գործողութիւն կոտարելիս ու վերջացնելիս միշտ խմում էին գինի, որով հաստատում էր կայացրած իրաւաբանական գործողութեան ոյժը: Սա կոչւում էր Litkouf. ուրեմն մի սիմբոլ, որով այլաբանօրէն պատկերացնում էին իրաւաբանական գործողութիւնը: Նոյնն էին անում հին և ժամանակակից ռուսները, որոնք համաձայնական մի գործ յաջող վերջացնելիս սովորաբար ասում են «спрыскивать виномъ», որ շատ անգամ արտայայտում է նաև «могарычъ» կամ «литки» բառերով: ¹⁾ Ռուս գիւղացիների սովորութեան իրաւունքի համեմատ մինչև վերջին ժամանակները հարսնախօսութեան ու նշանադրութեան համաձայնութիւնը կընքում էին գինի կամ օղի խմելով, որի իրաւաբանական նշանակութիւնը երևում էր նաև մի առածից՝ пропитая дочъ — не своя, чужая.

Նոյն Litkouf-ը տեսնում ենք հայ սովորոյթներում: Անժխտելի վիսստ է, որ հայ ժողովրդի հարսանեկան սովորութիւններում թէ հարսնախօսութեան, թէ նշանադրութեան, թէ գլխազնի (բաշլըղ զաւանի), թէ օփտի և այլ նոյնանման հարցերի վերաբերեալ համաձայնութիւնները կնքում են օղիով, որը սիմբոլական ձևով հաստատում էր կատարած գործողութեան իրաւաբանական նշանակութիւնը: Բազմաթիւ օրինակներից յիշենք միայն մի քանի բնորոշ նմուշներ:

Ջաւախքում, երբ վերջնականօրէն որոշում են հարսի և փեսացուի երկու կողմերի վճարելիք հաղմամասու քանակը, աղջկայ հայրը օղի է բերում, և սկսում են երկու կողմերը բաշքի լուսի թասը՝ խմել: ²⁾ Նմանապէս նշանադրութեան ատեն Ջաւախքում

*) Տես Աղղ. Հանդէս XXII գիրք.

¹⁾ Ефименко—Сборникъ народн. юридическихъ обычаевъ. I, 4р. 70.

²⁾ Ծ. Լալայեան—Ջաւախք, եր. 125.

«աչքի լուսի» օղի են խմում, երբ քահանան աւարտում է նշանի օրհնութիւնը՝ «Աչքդ լուս, Աստուած բարի վայելումն տայ» խօսքերով: ¹⁾

Բուլանըխում հարսնախօս միջնորդները, որոնց կընկերանայ նաև տղայի հայրը, կընկերայանան աղջկայ հօրը, որոնք սարէն-ձորէն խօսք առնելով, խօսակցութիւնը վերջապէս կըկանգնէ խնամիութեան վրայ և երբ վերջնականապէս կ'առաջարկեն հաստատելու խնամիութիւնը աղջկայ հայրը այդ կասէ և այդ այոն կըկոչուի հարէ կըրըն: Ամենից վերջը մէջ տեղը օղի կըզգայ և զորանով վերջացնում են նշանադրութիւնը, օղիով բարեմաղթելով միմեանց: ²⁾

Վայոց ձորում ընդունուած է, որ մինչև դրական պատասխան տալը խնամախօսներին զգուշանում են հիւրասիրել, «որովհետև որ էլչուն (խնամախօսին) հաց տաս՝ բնտմա աղջիկդ էլ տաս»: Վերջապէս երբ յայտնում են իրենց համաձայնութիւնը, խնամախօսները հանում են իրենց զըպանում պահած մի շիշ օղին և շնորհաւորելով մի մի բաժակ խմում, ապա վերադառնում, և նոյն օրուայ երեկոյին մի քանի ուրիշ տղամարդկանց և պառաւ կանանց հետ զալիս են աղջկայ տունը՝ բերելով իրենց հետ մի քանի շիշ օղի և մի քիչ չոր մրգեղէն: Աղջկայ տէրն էլ հրաւիրած է լինում իւր մօտիկ ազգականներն ու ազգականուհիները: Տղայի կողմի ամենատարեքաւորը ուղղելով խօսքը աղջկայ կողմի ամենատարեքաւորին՝ խնդրում է աղջկայ ձեռքը և երբ սա շտաբ, խէրը տեսնաւ ասելով յայտնում է իրենց համաձայնութիւնը, իսկոյն սկսում են խմել խնամախօսների բերած օղին և շնորհաւորում: ³⁾

Նոյնը տեղի է ունենում Գողթանում: ⁴⁾ Նոր-Բայազէտի գաւառում, եթէ մտադիր են տալու աղջիկը՝ խնամախօսին հիւրասիրում են, իսկ եթէ մերժելու են, չեն հիւրասիրում: Եթէ համաձայնութիւն կայացնելուց յետոյ խնամախօսները չեն կարողանում անմիջապէս նշան տալ, նշանադրուողների հայրերը մի որևէ խառնութեամբ կամ գինեմոնում, այգում, մի քանի մարդկանց ներկայութեամբ մի երկու շիշ օղի են խմում, միմեանց խնամի անուանելով ու բարեմաղթելով: ⁵⁾

Սղեբդի ու Բաղէշի հայերի մէջ նոյն ձևի համաձայնու-

¹⁾ Ե. Լալայեան—Ջաւիք, հր. 185.

²⁾ Բենե—Բուլանըխ, հր. 91 և 98.

³⁾ Ազգագրական հանգէս XIII, հր. 145.

⁴⁾ Ազգագրական հանգէս XII, հր. 119—120.

⁵⁾ Ազգագրական հանգէս XVI, հր. 12

թիւն են կայացնում «խօսկապ» և «մահուէղէմ» խօսքերով և անպայման օղի խմելով: ¹⁾

Օղի խմելով հայերի մէջ հաստատում և համաձայնութիւն են կայացնում բազմատեսակ առօրեայ պայմանադրութիւններ, որոնք վերաբերում են տուրեւառի, վաճառականական գործողութիւններին:

Խնչով բացատրել օղէխմութեան անհրաժեշտութիւնն իբրև փոխադարձ համաձայնութիւն հաստատելու սիմբոլը:

Թէ վերև նկարագրած օրինակներում և թէ հոմանիշ բոլոր սովորական փաստերում, որոնք տեղի են ունենում մեր ժողովրդական կենցաղում, աչքի են ընկնում երեք բնորոշ մօմենտներ. նախ՝ տեղի են ունենում երկար ու ձիգ խօսակցութիւններ և բանակցութիւններ. երկրորդ՝ անպայման հիւրասիրութիւն և վերջապէս՝ սրանց հետևանքը — օղի կամ գինի խմելը:

Ժամանակակից կուլտուրական մարդուն միանգամայն խորթ ու ծանր է, նոյն իսկ անհասկոնալի է թւում բանակցութիւնների ու սակարկութիւնների այն ձևն, որ գոյութիւն ունի արդի արևելեան ժողովուրդները բարձրում, էլ չենք ասում, թէ ինչ չափով այդ պէտք էր իշխեր նախնական հասարակութիւնների մէջ և հենց այժմն էլ նոյն չափերով տիրապետում է վայրենի ցեղերի կենցաղում: Սակարկող երկու կողմերը, որպէսզի իրենց բանակցութիւնն յաջող համաձայնութեան բերեն, երբէք բուն խնդրին չեն զիմում իսկոյն և եթէ. նրանք սկսում են զրուցել միանգամայն խորթ, գործին առնչութիւն չունեցող նիւթերի մասին և այն էլ որքան կարելի է երկարացնելով, ձգձգելով և միայն մէջընդմէջ շօշափում են բուն խնդիրը: ²⁾

Սև որքան երկարատև են լինում այդ խօսակցութիւններն, այնքան աւելի մեծ նշանակութիւն է ստանում կռած պայմանադրութիւնը: Այդ սովորութիւնը զարմանալի պահպանողութեամբ կատարւում է հայ ժողովրդի մէջ հարսնախօսութիւնների, գլխազնի և այլ համանման բանակցութիւնների միջոցին: Նրկու կողմերն էլ խօսում են «սարէն-ձորէն», երկար ու ծանր սակարկում, իսկ միևնոյն ժամանակ արդէն կանխակալ, կողմնակի բանակցութիւններով գլխաւոր սկզբունքային համաձայնութիւնն առած են լի-

¹⁾ «Արևելք» 1908 թ. № 6761 և 6764 Բարձր ու սովորութիւններ Բաղէշի մէջ: «Բիւզանդիս» 1897 թ. № 76—77 Կալան ինչպէս կըկարեն: «Մասիս» 1897 թ. № 71. Ամուսնութիւնը Սղերդի մէջ:

²⁾ Сборник народных юридических обычаев т. I, кр. 191.

Извѣстія Географическаго Общества 1878, вып. V, кр. 373.

Andree—Geographie d. Welthandels, I, 1877, кр. 114.

նի, եթէ պատկերացնենք այն սոցիալ-տնտեսական յարաբերունում: Այդ սակարկութիւններն, ինչպէս տեսանք, հանապազ ուղեկցում են հիւրասիրութիւններով փոխադարձօրէն կամ շահագործութեամբ կողմից: Վերջն ամենայնի, երբ արդէն բանակցութիւնները պսակւում են յաջող ելքով, վերջնական համաձայնութիւնը կնքում են օգիտով կամ գինով վկաների ներկայութեամբ:

Այս երեք բնորոշ մօմենտների նշանակութիւնն պարզ կըլի-թիւնները, որոնք իշխում էին նախնի հասարակական խմբակցութիւններում: Նախնական սերնդական ցեղերը իրենց փոխադարձ յարաբերութիւններում յայտնի էին մշտապես թշնամութեամբ, աւազակաբարոյ յարձակումներով: Տնտեսութեան ու արտադրութեան տնային ինքնամփոփ բնոյթը հանդերձ անդարդացած փոխանակական սխտեմով ինքնըստինքեան թոյլ չէին տալիս ցեղերի փոխադարձ յարաբերութիւններին խաղաղ և ամուր հիմք ստանալու, փոխադարձ հաւատ ներշնչելու: Տնտեսական ու փոխանակական յարաբերութիւնները կենդրոնացած էին լուկ դանազան ցեղական կազմակերպութիւններում, տարբեր սերունդներին պատկանող անձերին և ահա համաձայնութիւն կամ որեւէ պայման կապելու համար փոխանակական ու առևտրական գործողութիւնների մէջ անհրաժեշտ էր դուրս կորզել նորեկի մտքերը, ծանօթանալ նրա մտադրութիւնների, հանգամանքների հետ, մի խօսքով՝ լաւ ծանօթանալ և հիմնովին ճանաչել նրան, ում հետ պէտք էր գործ ունենալ: Կասկածը, թերահաւատութիւնը զէպի օտար ցեղակիցը միշտ ստիպում էր արթուն և աշխուրջ լինել, մշակել էր նախնական հիւրասիրութեան սովորոյթի մէջ որոշ ծէսեր, որոնք պարտաւորեցուցին պահանջում էին երկար բանակցութիւններ ու խօսակցութիւններ առևտրական գործառնութիւնները յաջողեցնելու նպատակով: Եւ ապա սիմբոլական գործողութիւններով, ինչպէս օգի կամ գինի խմելով, փոխադարձ մի ծխամորջից ծխելով և այլն, ամբապնդում և հաստատում էր համաձայնութիւնը, իբրև հաշտութեան նշան: